

8. Ընթացիկ հարց: «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնների վարիչների ընտրության կարգ»- ը նոր խմբագրությամբ հաստատելու հարցը:

Զեկուցող՝ իրավախորհրդատու Գ.Հովհաննիսյան

1. **Լսեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան:

Զեկուցողը ներկայացրեց 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքային պլանի նախագիծը:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Խ.Բեգիրջյանը:

Որոշեցին՝ Հաստատել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքային պլանը (կից ներկայացվում է):

2. **Լսեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփումը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2017-2018 ուսումնական տարվա մագիստրատուրայի առկա ուսուցման ընդունելության քննությունների 1-ին և 2-րդ փուլերին դիմել են 237 հոգի, որոնցից մրցույթը հաղթահարել են 202-ը, ընդ որում՝ հանրային կառավարում՝ 29 հոգի (անվճար՝ 7, վճարովի՝ 22), պետական կառավարում և տեղական ինքնակառավարում՝ 9 հոգի (անվճար՝ 3, վճարովի՝ 6, հանրային ֆինանսների կառավարում՝ 29 հոգի (անվճար՝ 8, վճարովի՝ 21), իրավագիտություն՝ 34 հոգի (անվճար՝ 9, վճարովի՝ 25), քաղաքագիտություն՝ 35 հոգի (անվճար՝ 9, վճարովի՝ 24), կառավարման հոգեբանություն՝ 19 հոգի (անվճար՝ 5, վճարովի՝ 14), գործարար վարչարարություն՝ 31 (անվճար՝ 0, վճարովի՝ 31), Զբոսաշրջության կառավարում՝ 8 հոգի (անվճար՝ 0, վճարովի՝ 8), քաղաքական ժուռնալիստիկա և PR տեխնոլոգիաներ՝ 8 հոգի (անվճար՝ 0, վճարովի՝ 8):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Մ.Մարգարյանը, Գ.Չատինյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներն ընդունել ի գիտություն (հաշվետվությունը կից ներկայացվում է):

3. **Լսեցին՝** Առարկայական ծրագրերի հաստատման հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան:

Զեկուցողը նշեց, որ որոշ ամբիոններ դեռ չեն հասցրել ամբողջական ներկայացնել առարկայական ծրագրերը և առաջարկեց 2017-2018թ. առարկայական ծրագրերի հաստատման հարցը քննարկել հոկտեմբեր ամսվա գիտական խորհրդի նիստում:

Արտահայտվեցին՝ Ա.Եզեկյանը, Մ.Մարգարյանը, Գ.Գսպոյանը, Գ.Չատինյանը:

Որոշեցին՝ 2017-2018թ. առարկայական ծրագրերի հաստատման հարցը քննարկել հոկտեմբեր ամսվա գիտական խորհրդի նիստում:

4.Լսեցին՝ Ընթացիկ հարց: Որպես Բելառուսի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ Բելառուսի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կադրերի պատրաստման ինստիտուտի ռեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իգոր Գանչերենոկի թեկնածությունը երաշխավորելու հարցը:

Ձեկուցող՝ Ա.Լոքյան:

Արտահայտվեցին՝ ռեկտոր Ա.Լոքյանը նշեց, որ Բելառուսի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կադրերի պատրաստման ինստիտուտի ռեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իգոր Գանչերենոկը ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի անդամ է: Հրատարակել է թվով 10 մենագրություն, 9 ուսումնական ձեռնարկ, շուրջ 190-ից ավել գիտական հոդվածներ, ղեկավարել է 4 տասնյակից ավել թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, ուստի առաջարկում եմ Գանչերենոկի թեկնածությունը երաշխավորել որպես Բելառուսի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ:

Որոշեցին՝ Բելառուսի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կադրերի պատրաստման ինստիտուտի ռեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իգոր Գանչերենոկի թեկնածությունը երաշխավորել որպես Բելառուսի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ:

5. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի ասպիրանտ Նարինե Հարությունի Գալոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Ձեկուցող՝ Կառավարման ամբիոնի վարիչ Գ.Գսպոյան:

Ձեկուցողը նշեց, որ Կառավարման ամբիոնում 2017թ. սեպտեմբերի 25-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ասպիրանտ Նարինե Հարությունի Գալոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը: Ամբիոնը նիստում կայացրած որոշմամբ միջնորդում է Ակադեմիայի գիտական խորհրդին՝ Կառավարման ամբիոնի ասպիրանտ Նարինե Հարությունի Գալոյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները և արդի հիմնախնդիրները» վերտառությամբ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել տնտ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Ամալյա Սարիբեկի Սարիբեկյանին:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Խ.Բեգիրջյանը, Գ.Գսպոյանը:

Որոշեցին՝ Կառավարման ամբիոնի ասպիրանտ Նարինե Հարությունի Գալոյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները և արդի հիմնախնդիրները» վերտառությամբ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել տնտ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Ամալյա Սարիբեկի Սարիբեկյանին:

6. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Կառավարման հոգեբանության ամբիոնի հայցորդ Անի Արտաշեսի Ահարոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը

Զեկուցող՝ Ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

Զեկուցողը նշեց, որ Կառավարման հոգեբանության ամբիոնում 2017թ. սեպտեմբերի 23-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է հայցորդ Անի Արտաշեսի Ահարոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը: Ամբիոնը նիստում կայացրած որոշմամբ միջնորդում է Ակադեմիայի գիտական խորհրդին՝ Կառավարման հոգեբանության ամբիոնի հայցորդ Անի Արտաշեսի Ահարոնյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Կադրերի հոգեբանական ընտրության առանձնահատկությունները մեղիա ոլորտում» վերտառությամբ՝ ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել հոգեբ. գիտ. թեկնածու Լաուրա Պետրոսյանին:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Ռ.Աղուզումցյանը, Լ. Պետրոսյանը:

Որոշեցին՝ Կառավարման հոգեբանության ամբիոնի հայցորդ Անի Արտաշեսի Ահարոնյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Կադրերի հոգեբանական ընտրության առանձնահատկությունները մեղիա ոլորտում» վերտառությամբ՝ ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել հոգեբ. գիտ. թեկնածու Լաուրա Պետրոսյանին:

1. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում պատրաստված Ա.Եզեկյանի, Գ.Հովհաննիսյանի, Զ.Հակոբյանի, Ն.Նազարյանի «Հանրային ծառայության համակարգը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ Իրավագիտության ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան:

Ձեկուցողը ներկայացրեց, որ Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հանրային ծառայության համակարգը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը ամբողջությամբ պատրաստ է և անհրաժեշտ է գիտական խորհրդի երաշխավորությունը՝ տպագրելու համար:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Գ.Չատինյանը, Ա.Եզեկյանը, Գ.Հովհաննիսյանը:

Որոշեցին՝ Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում պատրաստված Ա.Եզեկյանի, Գ.Հովհաննիսյանի, Զ.Հակոբյանի, Ն.Նազարյանի «Հանրային ծառայության համակարգը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

9. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնների վարիչների ընտրության կարգ»-ը նոր խմբագրությամբ հաստատելու հարցը:

Ձեկուցող՝ իրավախորհրդատու Գ.Հովհաննիսյան:

Գ.Հովհաննիսյանը ընդհանուր առմամբ ներկայացրեց «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնների վարիչների ընտրության կարգ»-ի նախագիծը:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Գ.Չատինյանը, Գ.Հովհաննիսյանը:

Որոշեցին՝ «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնների վարիչների ընտրության կարգ»-ը ընդունել նոր խմբագրությամբ (կից ներկայացվում է):

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան
30 սեպտեմբերի 2016թ.

Կ.Տ.